«ՓԵՐՖԵՔԹ ԱՈՒԴԻՏ»
Աուդիտորական խորհրդատվական ընկերություն
Լիցենզավորված է «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների Պալատ»
ՀԿ-ի խորհրդի թիվ 11ա որոշմամբ

«Սնառտ» ՍՊԸ
տնօրեն Մ. Թամամյանին
ՀՀ, ք. Երևան, Հ. Հովսեփյան 31

ք. Երևան 08 մայիս, 2024 թ.

Թեմա. «Սնառտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ընկերության 2023 թվականի ֆինանսական հաշվետվությունների աուդիտ:

Հարգելի պարոն Թամամյան,

Ըստ այս աուդիտի Ձեզ ենք ներկայացնում մեր Անկախ աուդիտորի հաշվետվությունը հայերեն լեզվով երկու օրինակից:

Հարգանքով՝
տնօրեն/բաժնետեր
տ.գ.թ.,աուդիտոր Ա. Բաբայան

Ֆինանսական հաշվետվություններ

և

անկախ աուդիտորական եզրակացություն

«Սնառտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2023 թվականի
դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա
վերաբերյալ

ԵՐԵՎԱՆ
Մայիս 2024 թ.

Աուդիտորական ծառայությունների իրականացման լիցենզիա ԱԾ N 1 20 0284 Տրված՝ 18.12.2020 Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների Պալատ հասարակական կազմակերպության խորհրդի թիվ 11ա որոշմամբ

«Փըրֆեքթ Աուդիտ» ՍՊԸ

ՀՀ,ք.Երևան 0010

Տիգրան Մեծ 4

Հեռ. +374 10 524 724

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է ընկերության ղեկավարությանը

Վերապահումով կարծիք

Մեր կողմից իրականացվել է «Մնառտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ «Ընկերություն») ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը 2023 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, բացառությամբ Վերապահումով կարծիքի արտահայտման հիմք բաժնում նկարագրված հանգամանքի հնարավոր ազդեցությունից, կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում ՝ 2023 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համախմբված ֆինանսական վիճակը և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները ու դրամական հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Վերապահումով կարծիքի հիմք

Ինչպես նկարագրված է սույն ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 4"1-ում, Ընկերության հիմնական միջոցները 588 916 հազ. դրամ գումարի սահմաններում ամբողջությամբ մաշված են և մենք հնարավորություն չենք ունեցել որոշելու այդ հիմնական միջոցների իրական արժեքը:

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Սույն ստանդարտներով սահմանված մեր պատասխանատվությունը նկարագրված է մեր հաշվետվության՝ *Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար* բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների վարքագծի միջազգային ստանդարտների խորհրդի՝ *Պրոֆեսիոնալ հաշվապահների*

վարքագրքի (ՀՎՄՍԽ վարքագիրք), և մենք կատարել ենք վարքագծի հետ կապված մեր այլ պարտականությունները՝ համաձայն նշված պահանջների և ՀՎՄՍԽ վարքագրքի: Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար են և համապատասխան՝ մեր՝ վերապահումով դրական կարծիքը արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համապատասխան սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմման, ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին վերահսկողության համակարգի ապահովման համար, որը ղեկավարությունը համարում է անհրաժեշտ սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու, անհրաժեշտության դեպքում՝ անընդհատ գործելու հետ կապված հարցերը բացահայտելու և Ընկերության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը, կամ էլ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Ընկերության համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկողության համար:

Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ դիտարկված, զերծ են սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից, և ներկայացնել աուդիտորական հաշվետվություն, որը ներառում է մեր կարծիքը:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, ինչը, սակայն, երաշխիք չէ, որ Աուդիտի միջազգային ստանդարտներին համաձայն իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումները, եթե այդպիսիք առկա են: Ֆինանսական հաշվետվություններում խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, երբ ողջամտորեն կարելի է ակնկալել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն համախմբված ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ սույն ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Աուդիտի միջազգային ստանդարտներին համաձայն իրականացրած աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն աուդիտի ողջ ընթացքում: Մենք նաև իրականացնում ենք հետևյալը.

- Բացահայտում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվություններում առկա էական խեղաթյուրումների ռիսկը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության հետևանքով էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել

հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:

- Դիտարկում ենք աուդիտին առնչվող ներքին վերահսկողության համակարգը՝ նպատակ ունենալով մշակել համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ կարծիք արտահայտել Ընկերության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ:
- Գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների և առնչվող տեղեկատվության բացահայտումների խելամտությունը:
- Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա պարտավոր ենք աուդիտորական հաշվետվությունում հղում կատարել ֆինանսական հաշվետվություններում ներկայացված համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդ բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր աուդիտորական եզրակացությունը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական հաշվետվության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այսուհանդերձ, ապագա իրադարձություններն ու հանգամանքները կարող են հանգեցնել Ընկերության գործունեության անընդհատության դադարեցմանը:
- Գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, տեղեկացնում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող էական թերությունների մասին:

աուդիտոր՝
Դավիթ Խաչատրյան

«Փըրֆեքթ Աուդիտ» ՍՊԸ

Տնօրեն/ բաժնետեր
Աղավնի Բաբայան

Մայիս 08, 2024 թ.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Սնառտ» ՍՊԸ

2023թ. դեկտեմբերի 31-ին
ավարտվող տարվա համար

հազար դրամ

ԱԿՏԻՎ	ծնթգ	31.12.2023թ.	31.12.2022թ.
1. Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4.1	192,145	260,461
Ոչ նյութական ակտիվներ	4.2		0
Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցներ		0	8,036
Հետաձգված հարկային ակտիվ		2,922	5,743
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	4.3		
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**195,067**	**274,240**
2. Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	4.4	82,767	280,849
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	4.5	2,506,673	1,866,712
Ընթացիկ շահութահարկի գծով կանխավճար			
Տրամադրված կարճաժամկետ փոխառություն	4.6		162,000
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	4.7	716,566	246,665
Այլ ընթացիկ ակտիվներ			
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**3,306,006**	**2,556,226**
Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ			
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		**3,501,073**	**2,830,466**
ՊԱՍԻՎ			
1. Սեփական կապիտալ			
Կանոնադրական (բաժնետիրական) կապիտալի զուտ գումար	4.8	140,050	140,050
Էմիսիոն եկամուտ			
Կուտակված շահույթ		2,523,721	1,849,760
Ընդամենը սեփական կապիտալ		**2,663,771**	**1,989,810**
2. Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ	4.9	62,500	250,000
Ակտիվներին վերաբերող շնորհներ	4.10		
Հետաձգված հարկային պարտավորություններ			
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**62,500**	**250,000**
3. Ընթացիկ պարտավորություններ			
Կարճաժամկետ վարկեր	4.11		26,407
Կարճաժամկետ փոխառություններ	4.12		
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	4.13	483,505	184,950
Շահութահարկի գծով պարտավորություն		275,057	347,389
Պահուստներ	4.14	16,240	31,910
Այլ ընթացիկ ֆինանսական պարտավորություններ			
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**774,802**	**590,656**
Օտարման խմբում ներառված որպես վաճառքի համար դասակարգված պարտավորություններ			
ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ		**3,501,073**	**2,830,466**

«ՍՆԱՌՏ»
«CHAPT»
«SNART»

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2024 թվականի ապրիլի 15-ին

Տնօրեն Մ. Թամամյան

Գլխ. Հաշվապահ Ն. Արաբաջյան

ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Մնառտ» ՍՊԸ

2023թ. դեկտեմբերի 31-ին
ավարտվող տարվա համար

հազար դրամ

Ցուցանիշի անվանումը	ծնթգ	31.12.2023թ.	31.12.2022թ.
Շարունակվող գործունեությունից			
Հասույթ	4.15	4,940,104	4,745,840
Վաճառքի ինքնարժեք	4.16	(2,607,180)	(2,237,243)
Համախառն շահույթ (վնաս)		**2,332,924**	**2,508,597**
Այլ եկամուտներ	4.17	79,481	166,310
Վարչական ծախսեր	4.18	(187,285)	(197,140)
Այլ ծախսեր	4.19	(34,562)	(166,305)
Ֆինանսական ծախսեր	4.20	(27,127)	(29,419)
Շահույթ (վնաս) մինչև հարկումը		**2,163,431**	**2,282,043**
Շահութահարկի գծով ծախս	4.21	(389,446)	(414,810)
Տարվա շահույթ(վնաս) շարունակվող գործունեությունից		**1,773,985**	**1,867,233**
Ընդհատված գործունեության զուտ շահույթ (վնաս)			
Ընդամենը տարվա շահույթ (վնաս)		**1,773,985**	**1,867,233**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ			
Ընդհանուր համապարփակ ֆինանսական արդյունքներ		**1,773,985**	**1,867,233**

Տնօրեն Մ. Թամամյան

Գլխ. Հաշվապահ Ն. Արաբաչյան

«ՄՆԱՌՏ» «CHART» 02232715

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Մնառտ» ՍՊԸ

2023թ. դեկտեմբերի 31-ին
ավարտվող տարվա համար

հազար դրամ

	Կանոնադրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Կուտակված շահույթ (վնաս)	Ընդամենը
	I. Նախորդ տարի (ժամանակաշրջան)			
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.	**80,050**	**0**	**910,222**	**990,272**
Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և էական սխալների ճշգրտումը			8	8
Վերահաշվարկված մնացորդը	**80,050**	**0**	**910,230**	**990,280**
Հաշվետու տարվա համապարփակ ֆինանսական արդյունք			1,867,233	1,867,233
Բաժնետերերի հետ գործարքներ	60,000			60,000
Դուստր ընկերության շահույթի/վնասի դուրսգրում կապված վաճառքի հետ			138,197	138,197
Շահաբաժիններ			(1,065,900)	(1,065,900)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.	**140,050**	**-**	**1,849,760**	**1,989,810**
	II. Ընթացիկ տարի (ժամանակաշրջան)			
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.	**140,050**	**0**	**1,849,760**	**1,989,810**
Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և էական սխալների ճշգրտումը			(24)	(24)
Վերահաշվարկված մնացորդը	**140,050**	**0**	**1,849,736**	**1,989,786**
Հաշվետու տարվա համապարփակ ֆինանսական արդյունք			1,773,985	1,773,985
Բաժնետերերի հետ գործարքներ				0
Դուստր ընկերության շահույթի/վնասի դուրսգրում կապված վաճառքի հետ				0
Շահաբաժիններ			(1,100,000)	(1,100,000)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2023թ.	**140,050**	**0**	**2,523,721**	**2,663,771**

Տնօրեն Մ. Թամամյան

Գլխ. Հաշվապահ Ն. Արաբաչյան

«ՍՆԱՌՏ» «CHAPT» «SNART» 02232715

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

«Սնառտ» ՍՊԸ

2023. դեկտեմբերի 31-ին
ավարտվող տարվա համար

հազար դրամ

Հոդվածի անվանումը	31.12.2023թ.	31.12.2022թ.
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից մուտքեր	5,528,257	5,031,755
Գործառնական այլ գործունեությունից մուտքեր	355	199
Ընդամենը մուտքեր	***5,528,612***	***5,031,954***
Նյութերի, ապրանքների ձեռք բերման գծով ելքեր	920,930	1,452,226
Աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գծով ելքեր	865,122	194,661
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	730,393	743,428
Վճարումներ բյուջե	1,402,944	1,188,234
Վճարումներ սոցիալական ապահովագրության հիմնադրամ		
Գործառնական այլ գործունեությունից ելքեր	31,563	45,173
Ընդամենը ելքեր	***3,950,952***	***3,623,722***
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	***1,577,660***	***1,408,232***
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների մուտքեր		
Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների վաճառքներից		
Տրամադրված փոխառությունից մայր գումար և տոկոս	166,450	144,011
Ընդամենը ներդրումային գործունեությունից ելքեր	***166,450***	***144,011***
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների ելքեր		
Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների ձեռք բերման գծով	46,272	48,556
Տրամադրված փոխառությունից		211,500
Ընդամենը ներդրումային գործունեությունից ելքեր	***46,272***	***260,056***
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	***120,178***	***-116,045***
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր		
Սեփական կապիտալի գործիքների թողարկումից և վերավաճառքից		60,000
Ստացված վարկերից և փոխառություններից		250,000
Ընդամենը ֆինանսական գործունեությունից մուտքեր	***0***	***310,000***
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների ելքեր		
Ստացված վարկերի և փոխառությունների մարումից	213,907	135,045
Վճարված շահաբաժիններ և տոկոսներ	1,013,877	1,221,286
Ընդամենը ֆինանսական գործունեությունից ելքեր	***1,227,784***	***1,356,331***
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	***-1,227,784***	***-1,046,331***
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր	***470,054***	***245,856***
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ	***-153***	***-544***
Դրամական միջոցների մնացորդը տարվա սկզբին	***246,665***	***1,353***
Դրամական միջոցների մնացորդը տարվա վերջին	***716,566***	***246,665***

Տնօրեն Ս. Թամամյան

Գլխ. Հաշվապահ Ն. Արաբաչյան